Հավելված ___
ՀՀ կրթության և գիտության նախարարի
20__թ. __________ -ի N ___-Ն հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պետական գրանցման No ____
«____» _________________20___թ.

# ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ

# ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

(ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ)

Որակավորումը՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏՐԱԿՏՈՐԻՍՏ-ՄԵՔԵՆԱՎԱՐ

Որակավորման աստիճանը՝ ԱՐՀԵՍՏԱՎՈՐ

Մասնագիտությունը՝ 3601-Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում

Ուժի մեջ է մտնում՝ «____» _________________20___թ

Երևան 20 ____ թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ .... 4
1.1. Որակավորման անվանումը .... 4
1.2. Որակավորման աստիճանը .... 4
1.3. Որակավորման տարակարգը .... 4
1.4. Մասնագիտությունը .... 4
1.5. Արժեքը .... 4
1.6. Ուսումնառության նորմատիվային ժամկետը .... 4
1.7. Կրթության ձևը .... 4
1.8. Որակավորման բնութագիրը .... 4
1.8.1. Զբաղմունքը. .... 4
1.8.2. Մասնագիտական գործունեության բնագավառները՝ ըստ ՀՀ տնտեսական գործունե-ության տեսակների դասակարգչի՝ .... 4
1.8.3. Մասնագիտական գործունեության օբյեկտները. .... 4
1.8.4. Մասնագիտական գործունեության տեսակները. .... 5
1.8.5. Մասնագիտական գործունեության պարտականությունները. .... 5
1.8.6. Որակավորումը ներկայացվող ընդհանուր պահանջները .... 5
2. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .... 6
3. ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .... 6
4. ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ .... 7
4.1. ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքները .... 7
4.1.1. ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում՝ .... 7
4.1.2. մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում՝ .... 7
4.1.3. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական առարկաների ծրագրերի նվազագույնին ներկայաշցվող պահանջները .... 7
4.2. Առանցքային հմտությունները .... 7
4.3. Կարողությունները .... 8
4.3.1 ՄՈԴՈՒԼ 1. «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» .... 8
4.3.2 ՄՈԴՈՒԼ 2. «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ» .... 12
4.3.3 ՄՈԴՈՒԼ 3. «ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԱ» .... 15
4.3.4 ՄՈԴՈՒԼ 4. «ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՅՈՒՂԱՆՅՈՒԹԵՐ» .... 17
4.3.5 ՄՈԴՈՒԼ 5. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐ» .... 19
4.3.6 ՄՈԴՈՒԼ 6. «ՏՐԱԿՏՈՐԻ ՇԱՐԺԻՉԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ» .... 22
4.3.7 ՄՈԴՈՒԼ 7. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ» .... 27
4.3.8 ՄՈԴՈՒԼ 8. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՈՒԺԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ» .... 32
4.3.9 ՄՈԴՈՒԼ 9. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԱՅԻՆ ՄԱՍԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ» .... 34
4.3.10 ՄՈԴՈՒԼ 10. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՍԱՐՔԵՐԸ» .... 36

4.3.11 ՄՈԴՈՒԼ 11. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ» ..... 38
4.3.12 ՄՈԴՈՒԼ 12. «ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» ..... 42
4.3.13 ՄՈԴՈՒԼ 13. «ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» ..... 47
4.3.14 ՄՈԴՈՒԼ 14. «ՀՈՂԱՄՇԱԿՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ» ..... 49
4.3.15 ՄՈԴՈՒԼ15. «ՑԱՆԻՉ ԵՎ ՏՆԿԻՉ ՄԵՔԵՆԱՆԵՐ, ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ» ..... 52
4.3.16 ՄՈԴՈՒԼ 16. «ԲՈՒՅՍԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ» ..... 55
4.3.17 ՄՈԴՈՒԼ 17. «ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԵՎ ԿԵՐԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ» ..... 57
4.3.18 ՄՈԴՈՒԼ 18. «ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻՑ ՀԵՏՈ ՀԱՏԻԿԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ» ..... 60
4.3.19 ՄՈԴՈՒԼ 19. «ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ» ..... 62
4.3.20 ՄՈԴՈՒԼ 20. «ՀՈՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱՑԱՆՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄԸ» ..... 65
4.3.21 ՄՈԴՈՒԼ 21. «ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ՀՈՂԻ ՄԵՋ» ..... 67
4.3.22 ՄՈԴՈՒԼ 22. «ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ..... 69
4.3.23 ՄՈԴՈՒԼ 23. «ԿԱՐՏՈՖԻԼԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ ԵՎ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ» ..... 71
4.3.24 ՄՈԴՈՒԼ 24. «ՑԱՆՈՎԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԽՈՏԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ» ..... 73
4.3.25 ՄՈԴՈՒԼ 25. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ» ..... 75
4.3.26 ՄՈԴՈՒԼ 26 «ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» ..... 77
4.3.27 ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ..... 79

5. ՊԱՀԱՆՋՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ 82
5.1. Ընդհանուր դրույթներ ..... 82
5.2. Ընդունելության գործընթացի կազմակերպման պայմաններ ..... 82
5.3. Ուսումնական գործընթացի կազմակերպման պայմաններ ..... 82
5.3.1. Կադրային ապահովություն և կադրային համապատասխանություն ..... 82
5.3.2. Ուսումնամեթոդական ապահովություն ..... 83
5.3.3. Նյութատեխնիկական ապահովություն (կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, ուսումնական, ուսումնաօժանդակ և օժանդակ ստորաբաժանումների, նյութերի ու պարագաների երաշխավորված ցանկ) ..... 83
5.3.4. Ուսումնական գործընթացի կազմակերպման ընդհանուր նորմատիվներ ..... 84
(ուսումնական պլան) ..... 84
5.4. Պրակտիկաների կազմակերպման պահանջներ ..... 85
5.5. Միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման պահանջներ ..... 85

6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ..... 86

# 1. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1. 3106 - «Գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավար» որակավորու-մը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի N 73-Ն որոշմամբ:

1.2. Որակավորման աստիճանը՝ Արհեստավոր:

1.3. Որակավորման տարակարգը՝ 3-4

1.4. Մասնագիտությունը՝ 3601 - «Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում»:

1.5. Արժեքը՝ - - - - [1]

1.6. Ուսումնառության նորմատիվային[2] ժամկետը՝ 1 տարի

1.7. Կրթության ձևը՝ առկա (ցերեկային):

1.8. Որակավորման բնութագիրը

1.8.1. Զբաղմունքը.

«Գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավար» արհեստավորը կարող է իրականացնել հետևյալ զբաղմունքը՝ ըստ ՀՀ Զբաղմունքների դասակարգչի՝

*8331 «Ֆերմաների, անտառտնտեսությունների, շարժիչավոր սարքավորումների մեքենավարներ»*

1.8.2. Մասնագիտական գործունեության բնագավառները՝ ըստ ՀՀ տնտեսական գործունե-ության տեսակների դասակարգչի՝

01. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ ԱՅԴ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

02. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ ԱՅԴ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1.8.3. Մասնագիտական գործունեության օբյեկտները[3].

- - - - -

---

[1] կլրացվի կրեդիտային համակարգով ուսուցման անցնելու դեպքում:
[2] միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով:
[3] կլրացվի ՅՅ Զբաղմունքների դասակարգչի համապատասխան զբաղմունքի պարզաբանումները ընդունելու հետո:

### 1.8.4. Մասնագիտական գործունեության տեսակները[4].

- - - - -

### 1.8.5. Մասնագիտական գործունեության պարտականությունները[5].

- Կատարել գյուղատնտեսական մասնագիտացված աշխատանքներ, ապահովելով գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության ագրոտեխնիկական և տեխնոլոգիական պահանջները.
- Տրակտորային կցանքով կատարել բեռների փոխադրումներ.
- Կատարել տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների տեխնիկական սպասարկման և կարգավորումների աշխատանքներ.
- Ապահովել կենսագործունեության անվտանգության և բնության պահպանության կանոնները.

### 1.8.6. Որակավորմանը ներկայացվող ընդհանուր պահանջները

Պահանջվում են լայն, ընդհանուր գիտելիքներ, տվյալ ոլորտին հատուկ գործնական և տարրական տեսական գիտելիքներ, ինչպես նաև ուղղորդման ներքո խնդիրներ իրականացնելու ունակություն: Սովորողները պատասխանատվություն են կրում իրենց ուսումնառության համար և ունեն գործնական սահմանափակ փորձ աշխատանքի կամ ուսումնառության որևէ առանձին ոլորտում:

**Հմտությունները**

Օգտագործել տվյալ բնագավառին վերաբերող խնդիրներ լուծելու մի շարք հմտություններ և ցուցաբերել սեփական մեկնաբանությունը մեթոդների, գործիքների և նյութերի ընտրության և հարմարեցման միջոցով: Գնահատել տարբեր մոտեցումները խնդիրներին:

**Անձնական և մասնագիտական կարողություններ**

*(ա) Ինքնուրույնություն և պատասխանատվություն*

Ստանձնել խնդիրների լուծման պատասխանատվություն և ցուցաբերել որոշ ինքնուրույնություն աշխատանքային դերում կամ ուսումնառության մեջ՝ հիմնականում կայուն, սակայն որոշ փոփոխական գործոններով միջավայրում:

*(բ) Ուսումնառելու կարողություն*

Պատասխանատվություն կրել սեփական ուսումնառության համար:

*(գ) Հաղորդակցման և սոցիալական կարողություն*

Իրականացնել գրավոր և բանավոր հաղորդակցում և արձագանքել այդպիսի հաղորդակցմանը: Պատասխանատվություն ստանձնել սեփական անձն ընկալելու (ինքնաճանաչման) և սեփական վարքագծի համար:

*(դ) Մասնագիտական և զբաղմունքի (աշխատանքային) կարողություն*

Լուծել խնդիրներ՝ օգտագործելով տեղեկատվության հանրահայտ աղբյուրները, հաշվի առնելով որոշ սոցիալական հարցեր:

---

[4] կլրացվի ՀՀ Զբաղմունքների դասակարգչի համապատասխան զբաղմունքի պարզաբանումները ընդունելու հետո:
[5] այս կետը կհանվի 1.8. 3 և 1.8.4 կետերը լրացնելուց հետո:

## 2. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած շրջանավարտը՝ արհեստավորը, հնարավորություն ունի՝

- շարունակել և յուրացնել միջին մասնագիտական կրթության հիմնական և լրացուցիչ կրթության ծրագրերը,
- ն ույն կամ հարակից մասնագիտությամբ միջին մասնագիտական կրթություն ստանալ կրճատված ժամկետներում,
- շարունակել և յուրացնել բարձրագույն կրթության հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը՝ սահմանված կարգով:

## 3. ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1. «Գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավար» որակավորմամբ արհեստավորի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը մշակվում է սույն պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան և ներառում է մասնագիտության ուսումնական պլանը, ուսումնական դասընթացների և պրակտիկաների ծրագրերը:

3.2. «Գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավար» որակավորմամբ արհեստավորի պատրաստման հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի իրականացման պայմաններին և ուսումնառության ժամկետներին ներկայացվող պահանջները կանոնակարգվում են սույն պետական կրթական չափորոշչով:

3.3. «Գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավար» որակավորմամբ արհեստավորի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը պետք է ներառի պարտադիր դասընթացներ՝ այդ թվում հաստատության առաջարկությամբ, ուսանողի ընտրությամբ առարկաներ և նախասիրական (ֆակուլտատիվ) դասընթացներ:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացները յուրաքանչյուր կրթաբլոկում (առարկայախմբում) իրենց բովանդակությամբ պետք է լրացնեն տվյալ կրթաբլոկում նշված դասընթացները:

# 4. ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

## 4.1. ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքները

4.1.1. ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում՝

- իմանա ՀՀ Սահմանադրության և իր բնագավառի օրենքները,
- ազատ տիրապետի մասնագիտական հայոց լեզվին (գրավոր և բանավոր) և հաղորդակցվի՝ առնվազն մեկ օտար լեզուներով,
- ունենա պատկերացում առողջ կենսակերպի մասին, տիրապետի ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,
- ծանոթ լինի համաշխարհային մշակույթին, տիրապետի վարվելաձևի կուլտուրային, իմանա դրա էթիկական և իրավական նորմերը, որոնք կարգավորում են մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները:

4.1.2. մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում՝

- ծանոթ լինի ժամանակակից բնագիտության հիմնական սկզբունքներին և հայեցակարգերին, բնապահպանական գլոբալ և տարածքային հիմնախնդիրներին,
- տիրապետի տեղեկատվության հավաքման, պահպանման և մշակման համակարգչային մեթոդներին և կարողանա օգտագործել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ:

4.1.3. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական առարկաների ծրագրերի նվազագույնին ներկայացվող պահանջները
270 ժամ
(կլրացվի վերոնշյալ առարկաների երաշխավորված ցանկն ընդունելուց հետո)

## 4.2. Առանցքային հմտությունները

4.2.1. Թվերի կիրառում
4.2.2. Հաղորդակցություն
4.2.3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ
4.2.4. Խնդիրների լուծում
4.2.5. Անձնական ուսումնառություն և կատարողականության բարելավում
4.2.6. Թիմային աշխատանք
4.2.7. Ձեռներեցություն
4.2.8. Անվտանգություն և առաջին բուժօգնություն

## 4.3. Կարողությունները

### 4.3.1 ՄՈԴՈՒԼ 1. «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ **ԸԱ1-07-001**

Մոդուլի նպատակը՝

Սովորողի մոտ ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա, տալ իմացություն աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողություններ:

Մոդուլի մակարդակը՝ 1-ին

Մոդուլի տևողությունը՝

46 ժամ դասախոսություն

26 ժամ գործնական պարապմունքներ

Մոդուլի կրեդիտային արժեքը՝ « 2 »

Մուտքային պահանջները՝ Չկան

Հատուկ պահանջներ՝

Այս մոդուլի ուսումնասիրման շրջանակը սահմանվում է սույն չափորոշչի 1.8.6 կետի պահանջներով:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների.**
2. **դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ.**
3. **տիրապետի աշխատանքի կուլտուրային և էթիկային.**
4. **իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ.**
5. **արդյունավետ աշխատի թիմում:**

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Կատարողականության չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակը՝ ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների.

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողություններին**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները.

բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի ընդունվելու և դրանից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները.

գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV).

դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր ՀՀ աշխատանքային օրենսգրքի համապատասխան դրույթներից: Ուսանողից կպահանջվի կազմել ինքնկենսագրություն (CV) և լրացնել աշխատանքային թերթիկի, աշխատանքի ընդունման ու դրանից ազատման դիմումի ձևեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսություննորի և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են դերային խաղեր: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 10 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները.

բ. ճիշտ է ներկայացնում գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ.

գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության զգացման դրսևորումներ.

դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կներկայացվի համապատասխան աշխատանքային իրավիճակ (օրինակ), կպահանջվի ներկայացնել իր վերաբերմունքը դրա նկատմամբ, առաջարկել լուծումների տարբերակներ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեստային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեսթեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒՅԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն 10 ժամ

Գործնական պարապմունքներ 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և այդտեղ կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները.

բ. ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ.

գ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողից կպահանջվի ներկայացնել պայմանական կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները: Ուսանողին կառաջադրվի պրոբլեմային աշխատանքային իրավիճակ և կպահանջվի առաջարկել լուծումների տարբերակներ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 8 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է բացատրում աշխատանքի հաճախման և ճշտապահության կարևորությունը.

բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները.

գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կներկայացվի ղեկավարի հետ հարաբերակցվելու որևէ իրավիճակ և կպահանջվի ներկայացնել պահաջվող վարքագիծը: Կտրվեն հարցեր իր և ղեկավարի իրավունքների ու պարտականությունների մասին:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 8 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Արդյունավետ աշխատել թիմում:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները.

բ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները,

գ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կտրվեն հարցեր թիմային աշխատանքի հիմնական սկզբունքների, թիմային խնդիրների լուծման մեթոդների վերաբերյալ: Մի խումբ ուսանողների կտրվի թիմով որևէ խնդիր լուծելու հանձնարարական, որի կատարման ընթացքում դիտման միջոցով կստուգվեն յուրաքանչյուր սովորողի՝ կատարման չափանիշներով սահմանված կարողությունների դրսևորումը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 10 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

## 4.3.2 ՄՈԴՈՒԼ 2. «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ»

Մոդուլի դասիչը` **ԸԱ1-07-002**

Մոդուլի նպատակը`

Սովորողի մոտ ձևավորել ցանկացած բնագավառում առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու, հասկանալու և համապատասխան լուծումներ գտնելու կարողություններ:

Այս մոդուլը նախատեսված է ոչ միայն շարքային աշխատողի այլև ղեկավար պաշտոններ զբաղեցնողների համար:

Մոդուլի մակարդակը` 1-ին

Մոդուլի տևողությունը`

24 ժամ դասախոսություն

12 ժամ գործնական պարապմունքներ

Մոդուլի կրեդիտային արժեքը` « 1 »

Մուտքային պահանջները`

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի «ԸԱ1-07-001-Ընդհանուր աշխատանքային հմտություններ» մոդուլը:

Հատուկ պահանջներ`

Այս մոդուլի ուսումնասիրման շրջանակը սահմանվում է սույն չափորոշչի 1.8.6 կետի պահանջներով:

Ուսումնառության արդյունքները`

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է`

1. **կառավարի սթրեսը և ժամանակը.**
2. **դրսևորի քննադատական մտածողություն.**
3. **առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տա համապատասխան լուծումներ:**

Գնահատման կարգը`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Կատարողականության չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակը` ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների.

ԱՐԴՅՈՒՆՔ 1. **Կառավարել սթրեսը և ժամանակը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները.

բ. ճիշտ է կազմում իր աշխատաքնային պլանը (պայմանական աշխատանքային պլան).

գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի կազմել սահմանած ժամկետում որոշակի աշխատանք կատարելու գործողությունների պլան:

Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր, ինչպես նաև կառաջադրվեն աշխատանքային իրավիճակների օրինակներ՝ սթրեսի կանխարգելման և դիմակայման գիտելիքները ստուգելու նպատակով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսություւնների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 4 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Դրսևորել քննադատական մտածողություն:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը.

բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ.

գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կներկայացվի որոշակի իրավիճակ կամ խնդիր և կպահանջվի, որ նա իրականացնի տվյալ օրինակի առողջ և կառուցողական քննադատություն: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 4 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում,

բ. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ,

գ. ճիշտ է գնահատում է արդյունքը.

դ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները.

ե. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է տալ դրանց արագ ու արդյունավետ լուծումներ:

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կներկայացվի մի քանի պրոբլեմային և կոնֆլիկտային իրավիճակ՝ դրանց նախապայմաններով: Կպահանջվի, որ նա արագ կողմնորոշվի, ուսումնասիրի դրանց պատճառները, բացահայտի դրանք, առաջարկի կանխարգելիչ միջոցներ և տա արագ ու արդյունավետ լուծումներ: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 4 ժամ |

## 4.3.3 ՄՈԴՈՒԼ 3. «ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԱ»

Մոդուլի դասիչը՝ ՏՄ1-07-001

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավար» արհեստավորի պատրաստման համար: Ավարտելով այս մոդուլը՝ սովորողը ձեռք կբերի տեխնիկական և մասնագիտական աշխատանքային գծագրեր կարդալու և հասկանալու կարողություններ:

Մոդուլի մակարդակը՝ 1-ին

Մոդուլի տևողությունը՝ 36 ժամ գործնական պարապմունքներ

Մոդուլի կրեդիտային արժեքը՝ «1 »

Մուտքային պահանջները

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է լիարժեքորեն տիրապետի «Երկրաչափություն» առարկայից՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով:

Հատուկ պահանջներ՝ Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **կարդա մեխանիզմների աշխատանքային գծագրերը, նրանց պայմանական նշանակումները և մասնագրերը:**

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովվումն է:

Կատարողականության չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակը՝ ըստ մոդուլի ուսումնառության արդյունաների.

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարդալ մեխանիզմների աշխատանքային գծագրերը, նրանց պայմանական նշանակումները և մասնագրերը:

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. արդիական տեխնիկական պահանջներին համապատասխան, բոլոր էական տվյալների ընդգրկմամբ՝ ճիշտ է բացատրում մեխանիզմների գծագրերը.

բ. ճիշտ է հատկորոշում և մեկնաբանում մեխանիզմների պայմանական նշանները.

<u>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝</u>

Սովորողներին կառաջադրվեն մեխանիզմների տարբեր աշխատանքային գծագրեր՝ նրանց գործնական գիտելիքները և հմտությունները՝ մասնագրերի ստանդարտների և կանոնակարգերի իմացությունը պարզելու նպատակով:

Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների վրա, որի համար սովորողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները:

Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողի մոտ ձևավորել մեխանիզմների աշխատանքային գծագրերը հասկանալու կարողություն: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են եռակցման միացությունների և կարերի պատկերմանը վերաբերող ժամանակակից ստանդարտներ և կանոնակազեր, դիդակտիկ նյութեր, աշխատանքային գծագրեր, գծագրական գործիքներ և պարագաներ, ինչպես նաև ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Գործնական պարապմունքներ 36 ժամ

## 4.3.4 ՄՈԴՈՒԼ 4. «ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՅՈՒՂԱՆՅՈՒԹԵՐ»

Մոդուլի դասիչը՝ ՏՄ 1-07-002

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավար» ահրհեստավորի պատրաստման համար: Մոդուլի շրջանակներում ուսումնասիրվում են՝ ներքին այրման շարժիչների համար օգտոգործվող վառելանյութերը, տրակտորների և կոմբայնների մեխանիզմների յուղման համար օգտոգործվող յուղանյութերը: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը ձեռք կբերի վառելանյութերը և քսայուղերը ճանաչելու կարողություն, կիմանա նրանց մակնիշավորման սկզբունքները:

Մոդուլի մակարդակը՝ 1-ին

Մոդուլի տևողությունը՝ 8 ժամ դասախոսություն
4 ժամ գործնական պարապմունքներ

Մոդուլի կրեդիտային արժեքը՝ « 0,3 »

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է լիարժեքորեն տիրապետի «Ֆիզիկա» և «Քիմիա» առարկաներից՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով:

Հատուկ պահանջներ՝ Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **տարբերի ներքին այրման շարժիչների համար օգտոգործվող վառելանյութերը, իմանա նրանց մակնիշավորումը և կիրառության բնագավառները.**
2. **տարբերի տրակտորների և կոմբայնների մեխանիզմների յուղման համար օգտոգործվող յուղանյութերը, իմանա նրանց մակնիշավորումը և կիրառության բնագավառները::**

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովվումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակը ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տարբերել ներքին այրման շարժիչների համար օգտոգործվող վառելանյութերը, իմանալ նրանց մակնիշավորումը և կիրառության բնագավառները:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. տարբերում է կարբյուրատորրային և դիզելային շարժիչների համար օգտոգարծվող վառելիքը.

բ. ճիշտ է ընթերցում և մեկնաբանում վառելիքի մակնիշները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողին կտրամադրվեն վառելիքի տեսակներ և կպահանջվի դրանք իրարից զանազանել: Կառաջադրվի նաև վառելիքի մակնիշավորման ստանդարտներ՝ ընթերցելու և մեկնաբանելու նպատակով:

Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողի մոտ ձևավորել վառելիքի դասակարգման, հատկությունների մակնիշավորման, ճանաչման և կիրառման կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են վառելիքի նմուշներ, դիդակտիկ նյութեր, սարքեր և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝ 4 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Տարբերել տրակտորների և կոմբայնների մեխանիզմների յուղման համար օգտոգործվող յուղանյութերը, իմանալ նրանց մակնիշավորումը և կիրառության բնագավառները:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. տարբերում է տրակտորների և կոմբայնների մեխանիզմների յուղման համար օգտոգործվող յուղանյութերը

բ. ճիշտ է ընթերցում և մեկնաբանում յուղանյութերի մակնիշները.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողին կտրամադրվեն յուղանյութերի տեսակներ և կպահանջվի դրանք իրարից զանազանել, ինչպես նաև կառաջադրվի յուղանյութերի մակնիշավորման ստանդարտները ընթերցելու և մեկնաբանելու նպատակով:

Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողի մոտ ձևվորել յուղանյութերի դասակարգման, հատկությունների մակնիշավորման, ճանաչման և կիրառման կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են յուղանյութերի նմուշների, դիդակտիկ նյութեր, սարքեր և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝ 4 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 2 ժամ

## 4.3.5 ՄՈԴՈՒԼ 5. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ ՏՄ/ԳՓ1-07-001

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավար» և «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» ահրհեստավորների պատրաստման համար:Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ տրակտորների դասակարգման և ընդհանուր կառուցվածքի, տրակտորի շարժիչի ընդանուր կառուցվածքի, աշխատանքի, հիմնական մեխանիզմների և համակարգերի վերաբերյալ: Ավարտելով այս մոդուլը՝ սովորողը կիմանա տրակտորների դասակարգումը և ընդանուր կառուցվածքը, տրակտորային շարժիչների ընդանուր կառուցվածքը և աշխատանքը:

Մոդուլի մակարդակը՝ 1-ին

Մոդուլի տևողությունը՝ 14 ժամ դասախոսություն
4 ժամ գործնական պարապմունքներ

Մոդուլի կրեդիտային արժեքը՝ « 0,5 »

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է լիարժեքորեն տիրապետի «Ֆիզիկա» առարկային՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով:

Հատուկ պահանջներ՝ Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. իմանա տրակտորների և ինքնագնաց շասսիների դասակարգումը և կառուցվածքը
2. իմանա տրակտորային շարժիչների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների ընդանուր կառուցվածքը և աշխատանքը.
3. գործարկի շարժիչը:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովվումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակը ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների.

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ տրակտորների և ինքնագնաց շասսիների դասակարգումը և ընդանուր կառուցվածքը:**

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. տարբերակում է տարբեր մակնիշների տրակտորները և ինքնագնաց շասսիները.
բ. ճիշտ է շարադրում տրակտորների և ինքնագնած շասսիների ընդանուր կառուցվածքը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողներին առաջարկվելու է շարադրել տրակտորների և ինքնագնաց շասսիների դասակարգումը և ընդանուր կառուցվածքը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին գիտելիքներ տալ տրակտորների և ինքնագնաց շասսիների դասակարգման և ընդանուր կառուցվածքի վերաբերյալ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են պլակատներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝ 4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ տրակտորային շարժիչների և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների ընդանուր կառուցվածքը և աշխատանքը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է նկարագրում շարժիչի ընդանուր կառուցվածքը, նրա հիմնական մեխանիզմները և համակարգերը.

բ. ճիշտ է նկարագրում դիզելային և կարբյուրատորային շարժիչների աշխատանքային ցիկլերը.

գ. ճիշտ է նկարագրում շարժիչների իրական պրոցեսները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողին կտրվի տրակտորի որոշակի մակնիշի շարժիչ և կառաջարկվի շարադրել ընդանուր կառուցվածքը, նրա հիմնական մեխանիզմները և համակարգերը, նկարագրել աշխատանքային ցիկլը և շարժիչում կատարվող իրական պրոցեսները:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե սովորողը ճիշտ է կատարում բոլոր տրված առաջադրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին գիտելիքներ տալ տրակտորի շարժիչը շահագործելու համար: Ուսուցման ընթացքում օգտոգործվելու են տրակտորի շարժիչների վերաբերյալ դի[1]ակտիկ նյութեր և չափորոշիչներ, չափիչ գործիքներ, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝ 8 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Գործարկել շարժիչը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է գործարկում դիզելային շարժիչը.

բ. ճիշտ է շարադրում գործարկման ժամանակ անվտանգության տեխնիկայի պահանջները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողին առաջարկվելու է գործարկել դիզելային շարժիչը սահմանված կարգով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տրակտորի շարժիչը գործարկելու կարողություն:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տրակտորի շարժիճների վերաբերյալ դի[1]ակտիկ նյութեր և չափորոշիչներ, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝ 2 ժամ

Գործնական՝ պարապմունքներ՝ 2 ժամ

## 4.3.6 ՄՈԴՈՒԼ 6. «ՏՐԱԿՏՈՐԻ ՇԱՐԺԻՉԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ»

Մոդուլի դասիչը՝ ՏՄ/ԳՓ1-07-002

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավար» և «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» ահրիեստավորների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ տրակտորի շարժիչի հիմնական մեխանիզմների և համակարգերի վերաբերյալ և դրանք քանդելու, հավաքելու և կարգավորելու կարողություններ:

Մոդուլի մակարդակը՝ 1-ին

Մոդուլի տևողությունը՝ 32 ժամ դասախոսություն
40 ժամ գործնական պարապմունքներ

Մոդուլի կրեդիտային արժեքը՝ « 2 »

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՏՄ1-07-001, ՏՄ1-07-002 և ՏՄ/ԳՓ1-07-001 մոդուլները:

Հատուկ պահանջներ՝ Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **քանդել, հավաքել և կարգավորել շուռտվիակա-շարժաթևային մեխանիզմը:.**
2. **քանդել, հավաքել և կարգավորել գազաբաշխիչ մեխանիզմը.**
3. **սպասարկել շարժիչի սնման համակարգը.**
4. **սպասարկել շարժիչի յուղման համակարգը.**
5. **սպասարկել շարժիչի հովացման համակարգ:**

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովվումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակը ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների.

ԱՐԴՅՈՒՆՔ 1. **Քանդել, հավաքել և կարգավորել շուռտվիակա-շարժաթևային մեխանիզմը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է նկարագրում շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի կառուցվածքը և աշխատանքը.

բ. ճիշտ է քանդում և հավաքում շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի գլանամխոցային խումբը.

գ. ճիշտ է քանդում և հավաքում շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի ծնկավոր լիսեռը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ռսանողին կտրվի տրակտորի որոշակի մակնիշի շարժիչ: Առաջարկվելու է շարադրել այդ շարժիչի շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի կառուցվածքը, նրա մեքենամասերի առանձնահատկությունները և լծորդումների բնույթը, քանդել և հավաքել շուռտվիակա-շարժաթևային մեխանիզմի գլանամխոցային խումբը և ծնկովոր լիսեռը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի գլանամխոցային խումբը և ծնկավոր լիսեռը քանդելու և հավաքելու կարողություն: Ուսուցման ընթացքում օգտոգործվելու են տրակտորի շարժիճների վերաբեր-յալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, մոնտաժային աշխատանքների համար գործիքներ, հանիչներ, չափիչ գործիքներ, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 6 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 8 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Քանդել, հավաքել և կարգավորել գազաբաշխիչ մեխանիզմը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է նկարագրում գազաբաշխիչ մեխանիզմի կառուցվածքը և աշխատանքը.

բ. ճիշտ է քանդում և հավաքում գազաբաշխիչ մեխանիզմը.

գ. ճիշտ է կարգավորում բաշխիչ լիսեռի առանցքային տեղաշարժը, կափույրների բացակները և ճնշանվազման մեխանիզմը.

դ. ճիշտ է տեղադրում գազաբաշխիչ ժանանիվները և ստուգում գազաբաշխման փուլերը.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ռսանողին կտրվի տրակտորի որոշակի մակնիշի շարժիչ: Առաջարկվելու է շարադրել այդ շարժիչի գազաբաշխիչ մեխանիզմի կառուցվածքը և աշխատանքը, նրա մեքենամասերի առանձնահատկությունները, քանդել և հավաքել գազաբաշխիչ մեխանիզմը, կարգավորել գազաբաշխիչ և ճնշանվազման մեխանիզմները, ըստ նշանների տեղադրել ժանանիվները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապ-մունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տրակտորի շարժիչի գա-զաբաշխիչ մեխանիզմը քանդելու, հավաքելու և կարգավորելու կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտոգործվելու են տրակտորի շարժիճների վերաբերյալ դի[1]ակտիկ նյութեր և չափորոշիչներ, մոնտաժային աշխատանքների համար գործիքներ, հանիչներ, չափիչ գործիքներ, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |

Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Սպասարկել շարժիչի սնման համակարգը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է նկարագրում շարժիչի սնման համակարգի կառուցվածքը, աշխատանքը, առանձին մեխանիզմների կառուցվածքը և նշանակությունը.

բ. ճիշտ է ստուգում զտիչի տեխնիկական վիճակը, հավաքում այն և տեղադրում շարժիչի վրա.

գ. ճիշտ է կարգավորում կարբյուրատորը.

դ. ճիշտ է որոշում վառելիքի մատուցման մոմենտը.

ե. ճիշտ է ստուգում և կարգավորում բոցամուղերը.

զ. ճիշտ է շարադրում ավտոտրակտորային շարժիչների համար օգտագործվող վառելանյութերի դասակարգումը և նրանց հատկությունները.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվեն մի շարք առաջադրանքներ շարժիչի սնման համակարգի կառուցվածքին և աշխատանքին վերաբերվող գիտելիքները և կարողությունները ստուգելու նպատակով՝ որոշել զտիչների և կարբյուրատորի տեխնիկական վիճակը, հատուկ սարքով (մոմենտոսկոպով) որոշել վառելիքի մատուցման մոմենտը և կարգավորել այն, քանդել բոցամուղը, շարադրել նրա կառուցվածքը և բացատրել աշխատանքը, հավաքել բոցամուղը, ստուգել վառելիքի փոշիացման որակը, ստուգել բոցամուղի հերմետիկությունը, ստուգել և կարգավորել վառելիքի ներածման սկզբի ճնշումը, որոշել բոցամուղի անցունակությունը: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջդրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տրակտորի շարժիչի սնման համակարգը սպասարկելու կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտոգործվելու են տրակտորի շարժիչների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, մոնտաժային աշխատանքների համար գործիքներ, հանիչներ, չափիչ գործիքներ և սարքեր, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝ 10 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Սպասարկել շարժիչի յուղման համակարգը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է նկարագրում շարժիչի յուղման համակարգի կառուցվածքը, աշխատանքը, առանձին մեխանիզմների կառուցվածքը և նշանակոթյունը.

բ. ճիշտ է ստուգում յուղի պոմպի և զտիչի տեխնիկական վիճակը, հավաքում այն և տեղադրում շարժիչի վրա.

գ. ճիշտ է շարադրում տրակտորների համար օգտագործվող յուղերի և քսայուղերի դասակարգումը և նրանց հատկությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվեն մի շարք առաջադրանքներ շարժիչի յուղման համակարգի կա-ռուցվածքին և աշխատանքին վերաբերվող գիտելիքները և կարողությունները ստուգելու նպատակով: Ուսանողին առաջարկվելու է որոշել յուղի պոմպի և զտիչի տեխնիկական վիճակը և տալ դրա գնահատականը: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապ-մունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տրակտորի շարժիչի յուղման համակարգը սպասարկելու կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտոգործվելու են տրակտորի շարժիճների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, ստենդեր, մոն-տաժային աշխատանքների համար գործիքներ, հանիչներ, չափիչ գործիքներ, ուսումնական գրականություն

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 8 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 6 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Սպասարկել շարժիչի հովացման համակարգ:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է նկարագրում շարժիչի հովացման համակարգի կառուցվածքը, աշխատանքը, առանձին մեխանիզմների կառուցվածքը և նշանակությունը.

բ. ճիշտ է ստուգում ջրի պոմպի և օդափոխիչի տեխնիկական վիճակը, քանդում և հավաքում այն և տեղադրում շարժիչի վրա.

գ. ճիշտ է ստուգում հովացման համակարգի սարքերի տեխնիկական վիճակը.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվեն մի շարք առաջադրանքներ շարժիչի հովացման համակարգի կառուցվածքին և աշխատանքին վերաբերվող գիտելիքները և կարողություններնը ստուգելու նպատակով՝ որոշել ջրի պոմպի և օդափոխիչի տեխնիկական վիճակը և գնահատել այն, ստուգել թերմոստատի տեխնիկական վիճակը: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջրանքները: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապ-մունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տրակտորի շարժիչի հո-վացման համակարգը սպասարկելու կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտոգործվելու են տրակտորի շարժիճների վերաբերյալ դի¹ակտիկ նյութեր և չափորոշիչներ, մոնտաժային աշխատանքների համար գործիքներ, հանիչներ, չափիչ գործիքներ, ուսումնական գրականություն

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 4 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 6 ժամ |

## 4.3.7 ՄՈԴՈՒԼ 7. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ ՏՄ/ԳՓ1-07-003

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավար» և «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» ահրհեստավորների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ տրակտորի էլեկտրական սարքավորումների ընդանուր կառուցվածքի, աշխատանքի, հիմնական խմբերի վերաբերյալ և ձևավորել դրանն շահագործելու կարողություններ:

**Մոդուլի մակարդակը՝** 1-ին

**Մոդուլի տևողությունը՝** 12 ժամ դասախոսություն
24 ժամ գործնական պարապունքներ

**Մոդուլի կրեդիտային արժեքը՝** «1 »

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՏՄ1-07-001 և ՏՄ/ԳՓ1-07-002 մոդուլները:

**Հատուկ պահանջներ՝** Չկան

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլն յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **իմանա տրակտորների էլեկտրական սարքավորումների նշանակությունը, աշխատանքը, հիմնական կարգավորումները.**
2. **հանի և տեղադրի տրակտորի գեներատորը, կարգավորի շարժափոկի ձգվածությունը.**
3. **ստուգի և սպասարկի մարտկոցային կուտակիչները.**
4. **կարգավորի վառոցքի մոմենտը.**
5. **կարգավորի տրակտորի լուսավորման և լուսազդանշանային համակարգը.**
6. **հայտնաբերի և պարզ եղանակներով վերացնի տրակտորների էլեկտրասարքավորումների հիմնական անսարքությունները:**

**Գնահատման կարգը**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովվումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակը ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների.

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ տրակտորների էլեկտրական սարքավորումների նշանակությունը, աշխատանքը, հիմնական կարգավորումները:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ՝

- ճիշտ է շարադրում էլեկտրական սարքավորումների նշանակությունը և նրանց հիմնական խմբերը՝ հոսանքի աղբյուրները, վառոցքի համակարգը, լուսավորման և լուսազդանշանային համակարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ էլեկտրական սարքավորումների նշանակության և նրանց հիմնական խմբերի կառուցվածքին և աշխատանքին վերաբերվող գիտելիքների ստուգելու նպատակով: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ տրակտորի էլեկտրական սարքավորումների վերաբերյալ:

Ուսուցման ընթացքում օգտոգործվելու են տրակտորի էլեկտրասարքավորումների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, մոնտաժային աշխատանքների համար գործիքներ, ստենդեր, հանիչներ, չափիչ գործիքներ, ուսումնական գրականություն

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝ 2 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Հանել և տեղադրել տրակտորի գեներատորը, կարգավորել շարժափոկի ձգվածությունը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է շարադրում գեներատորի կառուցվածքը և աշխատանքը,

բ. ճիշտ է հանում և տեղադրում գեներատորը, կարգավորում շարժափոկի ձգվածությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողին առաջարկվելու է հանել գեներատորը, շարադրել նրա կառուցվածքը և աշխատանքը, ստուգել գեներատորի փաթույթների վիճակը, տեղադրելլ գեներատորը և կարգավորել շարժափոկի ձգվածությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տրակտորի գեներատորը շահագործելու կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտոգործվելու են տրակտորի էլեկտրասարքավորումների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, մոնտաժային աշխատանքների համար գործիքներ, ստենդեր, հանիչներ, չափիչ գործիքներ, ուսումնական գրականություն

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 4 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ստուգել և սպասարկել մարտկոցային կուտակիչները:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է շարադրում մարտկոցային կուտակիչների սպասարկման կարգը.

բ. ճիշտ է ստուգում մարտկոցային կուտակիչների տեխնիկական վիճակը հատուկ գործիքների օգնությամբ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողին առաջարկվելու է շարադրել մարտկոցային կուտակիչների սպասարկման կարգը և ստուգել դրանց տեխնիկական վիճակը բեռնվածքի երկժանու և խտաչափի օգնությամբ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տրակտորի մարտկոցը շահագործելու կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտոգործվելու են տրակտորի էլեկտրասարքավորումների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, մոնտաժային աշխատանքների համար գործիքներ, ստենդեր, հանիչներ, չափիչ գործիքներ, ուսումնական գրականություն

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

| | |
|---|---|
| Դասախոսություն՝ | 2 ժամ |
| Գործնական պարապմունքներ՝ | 4 ժամ |

**ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարգավորել վառոցքի մոմենտը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է շարադրում վառոցքի մոմենտի ազդեցությունը շարժիչի աշխատանքի վրա.

բ. ճիշտ է կարգավորում վառոցքի մոմենտը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողին առաջարկվելու է շարադրել վառոցքի մոմենտի ազդեցությունը շարժիչի աշխատանքի վրա և կարգավորել վառոցքի մոմենտը

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավերդ տրակտորի վառոցքի համակրգը շահագործելու կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտոգործվելու են տրակտորի էլեկտրասարքավորումների վերաբերյալ դիդակտիկ

նյութեր և չափորոշիչներ, մոնտաժային աշխատանքների համար գործիքներ, ստենդեր, հանիչներ, չափիչ գործիքներ, ուսումնական գրականություն

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝ 4 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կարգավորել տրակտորի լուսավորման և լուսազդանշանային համակարգը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է շարադրում տրակտորների լուսավորման և լուսազդանշանային համակարգի կառուցվածքը.

բ. ճիշտ է կարգավորում տրակտորի լապտերի լույսը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

